

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»  
ՎԻԵՆՆԱՅԻ ԿՐԿՆԱԳԻՐ ՁԵՌԱԳԻՐԸ

ԱՐԱՄ ԹՈՓՉՅԱՆ

Ագաթանգեղոսի անունով մեզ հասած «Պատմութիւնը» հայ հին գրական հուշարձանների մեջ բացառիկ է այն առումով, որ արգեն միջնադարում, միջազգային ճանաչում գտնելով, թարգմանվել է մի շարք լեզուներով: Գիրքն ուներ երկու հիմնական միմյանցից էպպես տարբեր խմբագրություն. այսպես կոչված «Գրիգորի վարքը», որի հայերեն սկզբնագիրը չի պահպանվել, և «Պատմութիւնը»: Հայտնի են «Վարքի» կամ «Պատմութիւնը» արաբերեն, ասորերեն, լատիներեն, վրացերեն, եթովպերեն, ղպտերեն, ասորատառ արաբերեն (քարշունի) և հին սլավոներեն ամբողջական խմբագրություններ կամ հատվածներ, որոնք մեծ մասամբ ծագում են հունարեն թարգմանություններից: Դրանք հրատարակված և մասնամասնորեն ուսումնասիրված են: Հիշատակենք այդ հրատարակություններից մի քանիսը. «Վարքի» արաբերեն թարգմանությունը հրատարակել է Ն. Մառը<sup>2</sup>, հունարեն թարգմանությունը՝ Գ. Գարիտը<sup>3</sup>, «Պատմութիւնը» եթովպերեն թարգմանությունը հրատարակել է Ֆ. Մ. Էստեյ-Պերեյրան<sup>4</sup>, արաբերեն թարգմանությունը՝ Ա. Տեր-Ղևոնդյանը<sup>5</sup>, հունարեն թարգմանությունը գիտական տեքստը՝ Գ. Լաֆոնտենը<sup>6</sup>, վրացերեն թարգմանությունը խմբագրությունները՝ Պ. Մուրադյանը<sup>7</sup>, «Վարքի» և «Պատմութիւնը»

<sup>1</sup> Գրքի տարբեր խմբագրությունների ու թարգմանությունների մասին մանրամասն տեղեկությունների համար տե՛ս G. Winkler. "Our Present Knowledge of the History of Agat'angelos and Its Oriental Versions". - "Revue des études arméniennes", NS XIV (1980), pp. 125-141. Տե՛ս նաև Ագաթանգեղոսի մատենագիտությունը. Հ. Ս. Ա ն ս յ ա ն. Հայկական մատենագիտություն, Ե-ժԸ դ.դ., հ. Ա, Երևան, 1959, էջ 151-214 և R. W. T h o m s o n. A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD (Corpus Christianorum). Brepols - Turnhout, 1995, pp. 90-95.

<sup>2</sup> Н. М а р р. Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (арабская версия). СПб., 1908.

<sup>3</sup> G. G a r i t t e. Documents pour l'etude du livre d'Agathange (Studi e Testi, 127), Vatican City, 1946. Տե՛ս նաև Գարիտի հրատարակած հունարեն տեքստի հայերեն թարգմանությունը. Ագաթանգեղոսի «Պատմութիւնը» հունական նորահայտ խմբագրությունը («Վարք») (թարգմանությունը հունարեն բնագրից՝ Հ. Բարթիկյանի, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. Տեր-Ղևոնդյանի). - «Էջմիածին», 1966, է, էջ 28-34, Ը, էջ 46-51, Թ-ժ, էջ 79-87:

<sup>4</sup> F. M. E s t e v e s - P e r e i r a. Vida de S. Gregorio, patriarca da Armenia, Lisbon, 1901.

<sup>5</sup> Ա. Տ ե ռ - Ղ լ Վ ո Ն Դ յ ա ն, Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, Երևան, 1968:

<sup>6</sup> G. L a f o n t a i n e. La version grecque ancienne du livre armenien d'Agathange (Publications de l'Institut Orientaliste de Louvain, 7), Louvain-la-Neuve, 1973 (այսուհետև՝ L a f o n t a i n e. նշվում են պարբերությունը, տողը և էջը):

<sup>7</sup> Պ. Մ ո լ ր ա դ յ ա ն, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Երևան, 1982 (այսուհետև՝ Մ ո լ ր ա դ յ ա ն. նշվում է էջը):

մի խառը տարբերակ ասորատառ արաբերեն (քարշունի), հրատարակել է Մ. վան Էսբրոեկը<sup>8</sup>:

Մեր խնդրո առարկա Վիեննայի կրկնագիրը, որ «Պատմութեանից» մի մեծ հատված պարունակող հնագույն ընդօրինակություն է, նույնպես հրատարակված է<sup>9</sup>, սակայն, ի տարբերություն նշված թարգմանությունների, մանրամասնորեն ուսումնասիրված չէ: Ցավալի է, որ այն անկարելի է եղել հաշվի առնել «Պատմության» Գալուստ Տեր-Մկրտչյանի և Ստեփան Կանայանցի գիտական հրատարակության մեջ<sup>10</sup>, որտեղ օգտագործված հնագույն ձեռագիրը XIII դ. է: Նրանք, անշուշտ, գիտեին Վիեննայի Մխիթարյան գրադարանում պահվող կրկնագրի մասին, սակայն չկարողացան դրանից օգուտ քաղել, քանի որ 1909 թ., երբ գիտական բնագիրը պիտի լույս տեսներ, ձեռագիրը միաբանության անդամ Հ. Գրիգորիս Գալեմ-քարյանի ձեռքին էր. նա ավարտել էր ջնջված սկզբնական տեքստի (Ագաթանգեղոսի) իր վերծանությունը և այն հրատարակության էր պատրաստում: Տեր-Մկրտչյանն ու Կանայանցն առաջաբանում գրում են. «... Դիմեցինք Հ. Գ. Վ. Գալեմքարյանին, խնդրելով, եթէ հնարաւոր է՝ տալ մեր հրատարակութեան համար իւր պատրաստած աշխատութիւնը... Բայց տեղեկանալով, որ Հ. Գալեմքարեանը մտադիր է առանձին հատորով հրատարակել իւր աշխատութիւնը՝ որոշեցինք առ այժմս բաւականանալ այս քչով՝ սպասելով, որ խոստացուածը լոյս տեսնի»<sup>11</sup>: Նրանք ձեռքի տակ ունեին կրկնագրի մի քանի հատված միայն՝ տպագրված Գարեգին Զարբանալյանի «Հայկական հին դպրութեան» մեջ, մի փաստ, որի առթիվ արդեն 1910 թ., գիտական հրատարակության իր գրախոսականում, ափսոսանք է հայտնել Անտուան Մեյեն<sup>12</sup>:

Գալեմքարյանի աշխատությունը լույս տեսավ 1911 թ., «Հուշարձան» վերնագիրը կրող հայագիտական ուսումնասիրությունների ժողովածուում, որ հրատարակվեց Վիեննայում՝ տեղի Մխիթարյան միաբանության հիմնադրման 100-ամյակի առթիվ: Ընթերցված տեքստը կրկնագրից ձեռքով արտանկարված և նմանահանութեամբ տպված, զբաղեցնում է ժողովածուի մոտ 90 էջ: Այն սկսվում է գիտական հրատարակության Ց 3-ից (Տէր-Մկրտչեան եւ Կանայեանց, Ց, 14) «[նաւահանդիստն հայսանել կարասցեն]», և հասնում մինչև «Վարդապետության» Ց 341-ը (Տէր-

<sup>8</sup> M. van Esbroeck. Un nouveau témoin du livre d'Agathange. – "Revue des études arméniennes", NS VIII (1971), pp. 13–167.

<sup>9</sup> Հ. Գրիգորիս Մ. Վ. է. Գալեմքարեան, Ագաթանգեղոսի կրկնագիր բնագիրը, «Յուշարձան» (գրական ժողովածոյ առթիւ 100-ամեայ յորելինի հաստատման Մխիթարեան Միաբանութեան ի Վիեննա, [1811–1911] եւ 25-ամեայ տարեշրջանի «Հանգէս Ամսօրեայ» ուսումնասիրութի [1887–1911]). Վիեննա, 1911, էջ 67–160 (այսուհետև՝ Գալեմքարեան. նշվում են էջը, սյունակը և տողերը):

<sup>10</sup> Ագաթանգեղոյ Պատմութիւն Հայոց (աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց), Թիֆլիս, 1909 (այսուհետև՝ Տէր-Մկրտչեան եւ Կանայեանց. նշվում են էջը և, անհրաժեշտության դեպքում, տողերը): Վերահրատարակությունը տե՛ս Մատենագիրք հայոց (Ե. դար), Հ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1289–1735:

<sup>11</sup> Տէր-Մկրտչեան եւ Կանայեանց, ժԲ:

<sup>12</sup> A. Meillet. Remarques sur le texte de l'historien arménien Agathange. – "Journal Asiatique" (Xe Série), 16 (1910), pp. 457–481.

Մկրտչեան եւ Կանայեանց, 173, 17-18)՝ «յաւիտեանց կատարեաց Միածնաւն ի իւրո[վ]»: Քանի որ երկրորդ օգտագործման համար ձեռագրի թերթերը եզրերից կտրվել են, պահպանված տեքստից բացակայում են մեծ ու փոքր բազմաթիվ հատվածներ: Գալեմքարյանն իր նախաբանում գրում է, որ կրկնագիրը կարգալու համար իրեն քիմիական շատ մեթոդներ առաջարկվեցին, բայց քանի որ դրանք կարող էին ձեռագիրը վնասել, ինքը նախընտրեց միայն կարմիր կավիճ օգտագործել: Նա ուշադրութուն է հրավիրում կրկնագրի և գիտական հրատարակութայան միջև եղած էական տարբերությունների վրա (առանց կոնկրետ օրինակներ բերելու)՝ շեշտելով այդ առումով Տեր-Մկրտչյանի և Կանայանցի պատրաստած տեքստի անկատարութունը: Հակառակ Գալեմքարյանի այս դիտողութայանը մինչև այսօր 1909 թ. հրատարակութայան և կրկնագրի միջև առկա տարբերութուններին որևէ հատուկ ուսումնասիրություն չի նվիրվել<sup>13</sup>:

Կրկնագիրը նկարագրված է Հ. Տաշյանի ձեռագրացուցակում<sup>14</sup>: Այն գրչագիր № 56-ն է: Ազաթանգեղոսը հավանաբար ընդօրինակված է եղել IX կամ X դարերում (ըստ Տաշյանի՝ այն կարող է նույնիսկ ավելի հին լինել և այգալիսով՝ պահպանված ամենահին Հայերեն ձեռագիրը): 1848 թ., երբ կրկնագիրը հայտնաբերվեց, այն կազմում էր «Անդրեասի մեկնութիւն Յովհաննու Յայտնութեան» վերնագիրը կրող, XIII դ. գրված № 351 ձեռագրի մաս: Կրկնագիրը մագաղաթ է բաղկացած մոտ 100 թերթից (ձեռագրի 2-199 էջերը): «Անդրեասի մեկնութայան» մի մասն Ազաթանգեղոսի «Պատմութայան» վրա գրելով՝ Մխիթար անունով գրիչն այնուհետև շարունակութայան համար թուղթ է օգտագործել (էջ 200-351, մոտ 75 թերթ): Հայտնաբերումից որոշ ժամանակ անց, հաշվի առնելով կրկնագրի բացառիկ կարևորութունը, այն առանձնացրել են № 351-ից ու գրել ուրիշ կազմի մեջ: Հին ձեռագիրը մեծ է եղել (32,5 x 25 սմ), գրված երկու սյունակով, յուրաքանչյուր էջում՝ երկաթագիր մոտ 30 տող: Մխիթարը մաքրել է սկզբնական տեքստը, մագաղաթները ծալել երկու մասի, եզրերը կտրել և գրանք օգտագործել նոր ընդօրինակութայան համար: Այսպիսով՝ մագաղաթյա հին թերթերը չափով հարմարեցվել են XIII դ. ձեռագրի երկրորդ մասը կազմող թղթերին (16 x 12,5 սմ):

Վերոհիշյալ գրախոսութայան մեջ Մեյեն Տեր-Մկրտչյանին ու Կանայանցին քննադատել է՝ Ազաթանգեղոսի հին հունարեն թարգմանությունը չօգտագործելու համար (այն հավանաբար կատարված է VI դ. վերջին կամ VII դ. սկզբին, և հիմնականում նրանից են ծագում մյուս լեզուներով թարգմանությունները): Մեր նպատակն է եղել՝ Գալեմքարյանի ընթերցած սկզբնական ձեռագիրը մանրամասնորեն համեմատել միաժամանակ 1909 թ. գիտական հրատարակութայան և հին հունարեն թարգմանութայան հետ (Լաֆոնտենի հրատարակած): Մեզ հաջողվել է գտնել զգալի թվով

<sup>13</sup> Պարույր Մուրադյանն Ազաթանգեղոսի վրացերեն խմբագրությունների իր հրատարակութայան մեջ ընդգրկել է նաև «Պատմութայան» մեզ հասած հնագույն պատառիկ-պահպանակները (Մ ու Ր ա յ ա ն, 235-258)՝ նշելով դրանց տարբերությունները ոչ միայն գիտական հրատարակութայան, այլև Վիեննայի կրկնագրի համեմատ:

<sup>14</sup> Հ. Յ ա կ ո վ բ ո ս Վ. Տ ա շ ե ա ն, Յուզակ Հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 261-266:

անհամապատասխանություններ՝ ավելի կամ պակաս էական, որոնք բուրն այս համառոտ հոդվածում հնարավոր չէ ներկայացնել: Այդ տարբերությունները կարելի է բաժանել երեք խմբի. 1) կրկնագիրը համընկնում է հունարեն թարգմանության հետ, և երկուսն էլ տարբերվում են գիտական տեքստից. նման դեպքերում կրկնագրի ընթերցումները պետք է նախընտրելի համարել (հատկապես այն դեպքերում, երբ գրանք հաստատվում են նաև հայերեն այլ ձևագրերով), 2) գիտական հրատարակությունը համընկնում է հունարեն թարգմանության հետ, և երկուսն էլ տարբերվում են կրկնագրից և 3) կրկնագրի, հունարեն թարգմանության ու գիտական տեքստի միջև համապատասխանություն չկա, այսինքն՝ երեքն էլ տարբերվում են միմյանցից: Երկրորդ ու երրորդ խմբերի դեպքերի վերաբերյալ անկարելի է ընդհանուր եզրակացություն հանգել. որևէ ընթերցում նախընտրելի համարելու համար յուրաքանչյուր դեպք պետք է առանձին քննել: Քանի որ մեր նպատակն այստեղ կրկնագրի կարևորությունը շեշտելն է, ուստի, կբավարարվենք միայն առաջին խմբի օրինակներով: Նշենք նաև, որ գիտական հրատարակության հիման վրա կատարվել են Ազաթանգեղոսի «Պատմության» երեք նոր թարգմանություն՝ Ռ. Թոմսոնի անգլերեն թարգմանությունը<sup>15</sup>, Ա. Տեր-Ղևոնդյանի աշխարհաբար հայերեն թարգմանությունը<sup>16</sup> և Ք. Տեր-Դավթյանի ու Ս. Արևշատյանի ռուսերեն թարգմանությունը<sup>17</sup>: Մեր համառոտ համեմատության մեջ, որտեղ որ անհրաժեշտ լինի, կընդգրկենք նաև այդ երեք թարգմանական հրատարակությունները:

Գիտական հրատարակության § 135-ում Տրդատ թագավորը քրիստոնյաների դեմ մի շրջաբերական նամակ է գրում իր բոլոր հպատակներին՝ բողոքելով, որ հաղթական անցյալից հետո Հայաստանը կորցրել է երբեմնի հզորությունը՝ աստվածներին ինչպես հարկն է չմեծարելու պատճառով: Կրկնագրում (Գալէմբեարեան, 121, II, 9 – 122, II, 4) հատվածը հետևյալն է. «Իսկ յորժամ զգիսն ոչ մարթացաք հաճել պաշտամամբ, զկարգ նոցա քաղցրացունել, հանին մերժեցին ի ցասմանն իւրեանց զմեզ ի մեծ տէրութենէն»: Հունարեն թարգմանությունը (Lafontaine, § 57, 21–24, 224) հաստատում է հայերեն ձևագրերից միայն կրկնագրում առկա «զկարգ» ընթերցումը՝ գիտական տեքստի «զկամս»-ի փոխարեն. «Όταν δὲ αὐτοὺς θεραπεύειν ἐν σεβάσμασιν οὐκ ἔσπουδάσαμεν καὶ τὰς διαταγὰς αὐτῶν ὑπερεφρονήσαμεν, ἐξέβαλον καὶ ἀπώσαντο ἡμᾶς τῇ ὀργῇ αὐτῶν ἀπὸ τῆς μεγίστης ἡμῶν δεσποτείας («Իսկ երբ չջանացինք ծառայել նրանց պաշտամունքով և նրանց կարգադրությունները քամահրեցինք, իրենց

<sup>15</sup> A g a t h a n g e l o s. History of the Armenians (translation and commentary by R.W. Thomson). Albany (State University of New York Press), 1976 (այսուհետև՝ Thomson. նշվում է էջը):

<sup>16</sup> Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, Հայոց պատմություն (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Տեր-Ղևոնդյանի), Երևան, 1983 (այսուհետև՝ Տեր-Ղևոնդյան. նշվում է էջը): Այս թարգմանությունն առաջին անգամ լույս է տեսել 1977 թ.:

<sup>17</sup> А г а т а н г е л о с. История Армении (перевод с древнеармянского, вступительная статья и комментарии К. С. Тер-Давтян и С. С. Аревшатяна). Ереван, 2004 (այսուհետև՝ Тер-Давтян и Аревшатян. նշվում է էջը):

ցասումով մեզ վճռեցին ու զրկեցին մեր մեծագույն իշխանությունից»): Ուշադրություն ենք հրավիրում *τας διαταγας αυτων* սπερεφρονησαμεν («ներանց [սահմանած] կարգերը [կամ՝ կարգադրությունները] քամահրեցինք») արտահայտության վրա: 1909 թ. հրատարակության մեջ (Տէր-Մկրտչեան եւ Կանայեանց, 77, 4-6) կարդում ենք. «զկամս նոցա քաղցրացուցանել ընդ մեզ»: Բնականաբար նոր թարգմանություններում հատվածը հասկացվել է ըստ գիտական տեքստի<sup>18</sup>: Նախնական է կրկնագրի ընթերցումը, իսկ մի գրիչ «զկարգ»-ը դարձրել է «զկամս» (*lectio facilior*), որն ավելի հարմար է թվում «քաղցրացուցանեմ» բային: Այնուհետև նա ինքը կամ մեկ ուրիշն ավելացրել է «ընդ մեզ»՝ արտահայտությունն ավելի դյուրընկալելի դարձնելու համար: Ինչ վերաբերում է «քաղցրացուցանեմ» բային, որի հունարեն համարժեքներն են՝ γλυκαίνω կամ ἰδύσσω. և որը չի համապատասխանում սπερεφρονησαμεν-ին, ապա կամ հայերեն բնօրինակում սկզբում մեկ ուրիշ բայ է եղել և հետագայում փոխվել, կամ էլ այն պետք է հասկանալ ոչ առաջին և ուղղակի իմաստով՝ «քաղցրացնել», այլ իբրև՝ «չկարողացանք աստվածների սահմանած կարգը դարձնել մեզ հաճելի (նախաստվոր)»: Եթե Ազաթանդեղոսն իրոք գրած է եղել «քաղցրացուցանել», ապա հունարեն թարգմանությունը («ներանց կարգադրությունները քամահրեցինք») նույնպես, «զկարգ» – «զկամս» փոփոխության նման, պետք է համարել տեքստի պարզեցում:

Մյուս օրինակը, որ կուզեինք բերել, § 256-ում է՝ «Վարդապետությունից» առաջ Գրիգորի քարոզում: Նա խոսում է մարգարեների մասին, որոնք, ըստ Տեր-Ղևոնդյանի թարգմանության (Տեր-Ղևոնդյան, 141)՝ «տիեզերքը լցրին կարգավորված ընթերցվածներով ... որպեսզի բոլոր նրա խոսքերին հնազանդվողները կարողանան՝ հայտնի տեսնել հենց իրեն՝ Աստծուն, ըստ վերին կարգադրության» (Հմմտ. Տէր-Մկրտչեան եւ Կանայեանց, 132, 14-15. «Լի արարեալ գտիեզերս յօրինեալ ընթերցուածովքն ... որպէս զի հնար լիցի ամենայն հնազանդելոցն բանից նոցա՝ զԱստուած ինքնին գլխովին յանդիման տեսանել ըստ տեսչութեանն»): Թոմսոնի թարգմանությունը (Thomson, 255), փոքր տարբերություններով, նույնն է<sup>19</sup>, մինչդեռ կրկնադրում խոսք չկա Աստծուն տեսնելու մասին. Գրիգորն ի նկատի ունի «երանելիներին» (մարգարեներին), որոնք կարծես հայտնվում են իրենց դրվածքներն ընթերցողին (Գալէմքեարեան, 148, I, 8-10). «որպէս զի համարեալ իսկ լիցի գերանելիսն իսկ ի գլխովին յանդիման տե-

<sup>18</sup> Հմմտ. Thomson, 145: "But when we were not able to please the gods with worship or favorably incline their will towards us, then in their anger they deprived us of our great authority", Տեր-Ղևոնդյան, 83. «Սակայն երբ չկարողացանք աստվածներին պաշտամունքով հաճեցնել, նրանց կամքը մեր նկատմամբ քաղցրացնել, ցասումով մերժեցին մեզ, զրկեցին մեժ տերությունից» և Тер-Давтян и Аревшатын, 59: "А когда мы своим поклонением не сумели угодить богам, [не смогли] усладить их благоволение к нам, [они] в гневе, отринув, лишили нас великой державы".

<sup>19</sup> "(The prophets) filled the world with ordained readings ... that all believers in their words might be able to see God, in his providence, face to face". Հմմտ. Тер-Давтян и Аревшатын, 87. "[Пророки] наполнили мир упорядочивающими предписаниями ... чтобы всем, покорно принимающим их слово [людям], дать возможность по [Его] промыслу полностью охватить [мысленный] взором самого Бога".

սանել»<sup>20</sup>: Այս տարբերակը հաստատվում է հին հունարեն թարգմանութ-  
յամբ (Lafontaine, § 105, 18–19, 271). ὡστε δοκεῖν θεωρεῖσθαι τοὺς  
μακαρίους ἐκείνους κατὰ πρόσωπον («այնպես որ թվում է, թե դեմառդեմ  
տեսնում ես իրենց երանելիներին»): Այսպիսով կրկնադրում, հունարենի  
նման, գրված է «որպէս զի համարեալ իսկ լիցի» (ὡστε δοκεῖν) «որպէս զի  
հնար լիցի»-ի փոխարեն, «գերանելիսն» (τοὺς μακαρίους)՝ «զԱստուած»-ի  
փոխարեն, և չկա «ըստ տեսչութեանն», որը Թոմասնր թարգմանել է "in his  
providence," Տեր-Ղևոնդյանը՝ «ըստ վերին կարգադրության», Տեր-Դավթ-  
յանը և Արևշատյանը՝ "по [Его] промыслу": Կրկնագիրն ու հունարեն  
թարգմանությունն, անկասկած, արտացոլում են բնօրինակը:

Այնուհետև Գրիգորը հիշատակում է Մովսեսին (§ 256), որ, աստվածա-  
յին շնորհով, մարդկանց սովորեցրեց «ճշմարիտ գիտությունը»: Գիտական  
տեքստում հատվածը հետևյալն է (Տէր-Մկրտչեան եւ Կանայեանց, 132,  
18–133, 1). «Մովսէս ... սկիզբն արարեալ ուսուցանելոյ յամենաստեղծ  
յակզբնագործ ժամանակէն՝ աշխարհահամար աշխարհապատում մարգա-  
րէութեամբ՝ ամենեցուն աւանգեաց զճշմարիտ դիտութիւն»: Թոմասնր  
թարգմանել է համապատասխանաբար, թեպետ ոչ ճշգրտորեն. "Moses ...  
began teaching about the time of the first creation: by his prophecy and descrip-  
tion of the world he handed down to everyone true knowledge" («Մովսեսն ...  
սկսեց ուսուցանել առաջին արարման ժամանակի մասին. իր մարդարեութ-  
յամբ և աշխարհի նկարագրությամբ՝ նա բոլորին ավանգեց ճշմարիտ գի-  
տությունը»): «յԱմենաստեղծ յակզբնագործ ժամանակէն»՝ չի նշանակում  
«առաջին արարման ժամանակի մասին», այլ, եթե թարգմանենք բառա-  
ցիորեն՝ «սկսած ամենաստեղծ սկզբնագործ (առաջին ստեղծող) ժամանա-  
կից»: Ի (յ-) նախդիրը բացառական հոլովի հետ այստեղ նշանակում է՝  
«սկսած», ոչ «մասին»: Բացի այդ, Թոմասնր բաց է թողել ածականներից  
մեկը՝ «ամենաստեղծ» (երևի՝ այն տրամաբանությամբ, որ միայն Աստված  
կարող էր կոչվել «ամենաստեղծ», ոչ ժամանակը, ուստի՝ տեքստն աղա-  
վաղված է, և բառը պետք է դանց առնել), իսկ մյուսը («սկզբնագործ»)՝  
դարձրել է որոշիչով գոյական՝ «առաջին արարում»: Տեր-Ղևոնդյանը  
նույնպես (Տեր-Ղևոնդյան, 143), թեպետ երկու ածականներն անփոփոխ է  
թողել<sup>21</sup>, նույն կերպ է վարվել՝ արտահայտությունը թարգմանելով «ամե-  
նաստեղծ սկզբնագործ ժամանակի մասին»: Այսպիսով՝ հատվածը խրթին  
է, ակնհայտորեն՝ հետագա միջամտությամբ խաթարված, և թարգմանիչ-  
ները, թեկուզ քերականական կապերն անտեսելու հաշվին, փորձել են այն  
հասկանալ տրամաբանորեն: Նրանք, սակայն, նման խնդիր չէին ունենա,  
եթե գիտական տեքստի հրատարակիչները, տարընթեքումներն մեջ ընտ-  
րություն կատարելիս, օգտագործեին Վիեննայի կրկնագիրը և հաշվի առ-

<sup>20</sup> Այս տարընթեքումն առկա է նաև ուրիշ ձեռագրերում, սակայն Տեր-Մկրտչյանն ու  
Կանայեանցն այն դրել են տողատակում:

<sup>21</sup> «(Մովսեսն) սկսեց ուսուցանել ամենաստեղծ սկզբնագործ ժամանակի մասին, աշ-  
խարհահամար, աշխարհապատում մարգարեությամբ ամենքին ավանգեց ճշմարիտ գի-  
տությունը»: Հմմտ. Тер-Давтян и Аревшатян, 87: "Он (Моисей) начал учить о начале  
сотворения [мира], когда было создано все; он пророчествовал всем людям, всему миру и  
передал всем истинное знание".

ներին նաև հին հունարեն թարգմանությունը: Կրկնագրում գրված է (Պալէմքեարեան, 149, I, 5-7). «Մովսէս ... սկիզբն արարեալ ուսուցանելոյ ամենեցուն՝ առեալ զճշմարիտ գիտութիւնն աշխարհահամար աշխարհա- (պատում մեծ մարգարէիցն)»<sup>22</sup>: Այստեղ խոսք չկա «ամենաստեղծ սկզբնագործ ժամանակի» մասին, և սա հաստատվում է հին հունարեն թարգմանությունում (Lafontaine, § 105, 21-23, 271). Μωσῆς ... ἤρξατο διὰ δάσκειν πάντας. Δεξάμενος γὰρ ὁ μέγας ἐκείνος τῶν προφητῶν παρὰ Θεοῦ τὴν ἀληθινὴν γνῶσιν, ἐξηγήσατο τὴν κοσμοποιίαν («Մովսեսն ... սկսեց սովորեցնել բոլորին: Քանզի այդ մեծ մարդը, ստանալով մարգարեների ճշմարիտ գիտությունը, որ Աստուծոց է, պատմեց արարչագործությունը»): Թեպետ կրկնագրի և հունարեն թարգմանության միջև փոքր տարբերություններ կան, սակայն նրանք համընկնում են նաև այն իմաստով, որ Մովսեսը յուրացրեց «մարգարեների ճշմարիտ գիտությունը», այլ ոչ թե «իր մարգարեությունը ավանդեց այն բոլորին», ինչպես որ գիտական տեքստում է:

Կրկնագրում Գրիգորը, թագավորի հրամանով կախված մնալուց հետո, կախաղանից իջեցվում է երրորդ օրը («յաւուրն երրորդի» [Պալէմքեարեան, 111, II, 7] = τῆ τρίτῃ ἡμέρᾳ հունարեն թարգմանության մեջ [Lafontaine, § 51, 16, 218])՝ գիտական տեքստի (§ 116) «յաւուրն չորրորդի»-ի փոխարեն (Տէր-Մկրտչեան եւ Կանայեանց, 67, 9): Ըստ կրկնագրի՝ Գրիգորը վիրապում մնում է տասնչորս տարի («ամս չորեքտասան» [Պալէմքեարեան, 118, I, 7] = ἑττὴ δεκατέσσαρα հունարեն թարգմանության մեջ [Lafontaine, § 54, 21, 221])՝ գիտական տեքստի (§ 122) «ամս երեքտասան»-ի փոխարեն (Տէր-Մկրտչեան եւ Կանայեանց, 71, 3): Այնուհետև, երբ թագավորի զինվորները շրջապատում ու հսկում են կույսերին, ըստ կրկնագրի՝ Հռիփսիմեի գեղեցկությունը բոլորին հայտնի է դառնում երեք օր հետո («յետ երից աւուրց» [Պալէմքեարեան, 129, II, 5] = μετὰ τρεῖς ἡμέρας հունարեն թարգմանության մեջ [Lafontaine, § 70, 10, 236])՝ գիտական տեքստի (§ 162) «յետ երկուց աւուրց»-ի փոխարեն (Տէր-Մկրտչեան եւ Կանայեանց, 90, 9)<sup>23</sup>:

Գիտական բնագրի մի քանի հատվածներում կան կրկնագրի ու հին հունարեն թարգմանության մեջ բացակայող արտահայտություններ<sup>24</sup>, որոնք պետք է հետագա ընդմիջարկություններ համարել<sup>25</sup>: Օրինակ՝ կա-

<sup>22</sup> Պալէմքեարեանը փակագծերի հատվածը վերականգնել է նաև ուրիշ ձեռագրերում առկա նույն տարրնթերցման օգնությամբ:

<sup>23</sup> Տեր-Ղևոնդյանը նկատել է և ծանոթագրությունների մեջ (Տ ե ը - Ղ ե ո ն դ յ ա ն, 513) նշել օրերի ու տարիների քանակի այս տարբերությունները կրկնագրի (նաև՝ ուրիշ ձեռագրերի) և գիտական տեքստի միջև: Թոմսոնը նույնպես դրանց վրա ուշադրություն է դարձրել (Thomson, 466-467, 470), բայց կրկնագիրը վկայակոչում է միայն մեկ անգամ (466): Հմտ. Тер-Давтян и Аревшатян, 271-273.

<sup>24</sup> Դրանք բացակայում են նաև ուրիշ ձեռագրերում. տե՛ս գիտական հրատարակության համապատասխան էջերի տողատակում:

<sup>25</sup> Բոլոր երեք նոր թարգմանություններում, հասկանալի պատճառով, այդ ընդմիջարկությունները տեղ են գտել իբրև Ագաթանգեղոսի «Պատմության» մաս. մենք մեջբերումներ կանենք միայն Տեր-Ղևոնդյանի աշխարհաբար թարգմանությունից (տե՛ս նաև Thomson, 129, 215, 231 և Тер-Давтян и Аревшатян, 55, 76, 81):

խաղանի վրա իր ահավոր տանջանքից հետո (§ 117) Գրիգորն անկոտրուժ է մնում և թաղավորին ասում (Տէր-Մկրտչեան եւ Կանայեանց, 68, 1-3). «...Տե՛ս դու, զի ոչ ի տանջանաց քոց երկեայ ինչ ես, և ոչ զսաստ ահի քոյ համարեցայ ինչ. այլ զօրութեամբ Տեառն իմոյ մարտեալ ընդ թշնամ-ւոյն...» (Տեր-Ղևոնդյան, 75. «...Տե՛ս, թե ինչպես քո տված տանջանքներից բոլորովին չվախեցա և քո ահավոր սաստը առ ոչինչ համարեցի, այլ իմ Տիրոջ զօրութեամբ մարտնչելով թշնամու դեմ...»): Ընդգծված մասը՝ «և ոչ զսաստ ահի քոյ համարեցայ ինչ», չկա ո՛չ կրկնագրում, ո՛չ հունարեն թարգմանություն մեջ, հետևաբար՝ այն Ազաթանգեղոսի «Պատմություն» մեջ ավելացվել է հետագայում (Հմմտ. Գալէմքեարեան, 113, I, 3-4. «...Տե՛ս դու, զի ոչ ի տանջանաց քոց երկեայ ինչ ես, այլ զաւրութեամբ Տեառն իմոյ մարտեալ ընդ թշնամւոյն...» և հունարեն բառացի թարգմանությունը [Lafontaine, § 52, 4-5, 218]. Οὐ θεωρεῖς ὅτι οὐδὲ τὰς βασάνους σου ἐφοβήθην, ἀλλὰ τῆ δυνάμει τοῦ ἔμου δεσπότου πρὸς τὸν ἀντίπαλον ἠθλήσα):

Կույսերի մահապատժից առաջ նրանցից մեկը՝ Գայանեն, աղոթում է Աստուծուն (§ 207), և նրա վերջին խոսքերը հետևյալն են (Տէր-Մկրտչեան եւ Կանայեանց, 111, 21-22). «Տո՛ւր մեզ գյաղթութիւնդ քո, և չարն գործակցաւքն հանդերձ նկուն լիցի յահէ փառաց քոց...» (Տեր-Ղևոնդյան, 75. «Տո՛ւր մեզ քո հաղթությունը, իսկ չարը իր գործակիցներով հանդերձ կընկճվի քո փառքի ահից»): Վերջին արտահայտությունը՝ «յահէ փառաց քոց», չկա կրկնագրում և հունարեն թարգմանության մեջ,<sup>26</sup> ուստի՝ հետագա ընդմիջարկություն է (Հմմտ. Գալէմքեարեան, 131, II, 9-10. «...Տո՛ւր մեզ գյաղթութիւնդ քո, և չարն գործակցաւքն հանդերձ նկուն լիցի» և հունարեն թարգմանությունը [Lafontaine, § 87, 10-11, 254]. ...Δὸς ἡμῖν τὴν νίκην σου. Ὁ δὲ πονηρὸς ἄμα τοῖς συνεργοῖς αὐτοῦ ὡς πάντοτε, καὶ νῦν<sup>27</sup> ἐντραπήσεται):

Հետագա ընդմիջարկություն ենք գտնում նաև Գրիգորի՝ վերահիշյալ քարոզում (§ 231), որտեղ մի գրիչ կամ խմբագիր ավելացրել է՝ «ի խաչն Քրիստոսի» (Տէր-Մկրտչեան եւ Կանայեանց, 120, 14-15). «Եւ արդարև հասաք պարծանօք ի խաչն Քրիստոսի, զի չարչարանօքն Քրիստոսի վայելիցեմք ի նորա կամս և ի նորին վարդապետութեանն» (Տեր-Ղևոնդյան, 129. «Եվ արդարև պարծանքով հասանք Քրիստոսի խաչին, քանզի Քրիստոսի չարչարանքներով պիտի վայելենք նրա կամքի ու նրա վարդապետություն մեջ»): Հմմտ. Գալէմքեարեան, 137, II, 10 - 138, I, 2. «Եւ արդարեւ հասաք պարծանաւք, զի չարչարանաւքն Քրիստոսի վայելիցեմք ի նորա ...<sup>28</sup> ի նորին վարդապետութեանդ» և Lafontaine, § 95, 23-25, 261 ἀληθῶς γὰρ κατελάβωμεν κοινωνοὶ γενέσθαι τῶν καυχημάτων ἵνα κοινωνήσαντες τοῖς παθήμασι τοῦ Χριστοῦ ἀπολαύσωμεν καὶ τῆς

<sup>26</sup> Հետաքրքիր է, որ այդ արտահայտությունը չկա նաև Ազաթանգեղոսի «Պատմություն» հնագույն մի պատահական (Մ ու ը ռ ա դ յ ա ն, 242. պատահիկ № 1145), որը կարող է լինել IX-X դդ. (Մ ու ը ռ ա դ յ ա ն, 229):

<sup>27</sup> Հունարենի ὡς πάντοτε, καὶ νῦν («ինչպես միշտ, այնպես էլ հիմա») արտահայտությունը հայերենում բացակայում է:

<sup>28</sup> Տեքստն այստեղ հավանաբար աղավաղված է:



αὐτοῦ ἀθανάτου δόξης (բառացի՝ «Մեղ հիրավի վիճակվեց մասնակից գառնալ պարծանքներին, որպեսզի վայելքն ունենանք՝ կիսելու Քրիստոսի չարչարանքներն ու նրա անմահ փառքը»): «Հասանեմ» բայի առաջին իմաստն է՝ «հասնել», որը պահանջում է անողողակի ինքիր: Այդ պատճառով հետագայում տեքստի մեջ ավելացվել է՝ «ի խաչն Քրիստոսի», մինչդեռ «հասաք» այստեղ պետք է պարզապես հասկանալ որպես՝ «հաջողություն ունեցանք» (հմմտ. «գտանել ղիսնդրելին» իմաստը ՆԲՀԼ-ում, Բ, էջ 50), առանց որևէ անողողակի ինքիր:

Կրկնագրի՝ մեր մատնանշած հատվածները (գրանք բոլորը չէին, այլ՝ ընտրված մի քանի օրինակ), որոնցում առկա են Ագաթանգեղոսի «Պատմություն» նախնական ընթերցումներ, մեկ անգամ ևս ընդգծում են Վիեննայի այդ հնագույն ձեռագրի կարևորությունը՝ պահպանված նյութի հիման վրա գիտական տեքստի վերջնական ճշգրտման համար: 1909 թ. հրատարակությունը հմուտ բանասերների՝ մոտ յոթ տարվա ջանադիր աշխատանքի արդյունք էր և հայագիտության բնագավառում ամենանշանակալից իրադարձություններից մեկը: Սակայն, գրքի լույս տեսնելուց քիչ ժամանակ անց, Տեր-Մկրտչյանի և Կանայանցի աշխատանքի մի շարք թերություններ ցույց տվեցին արդեն Անտոևան Մեյեն<sup>29</sup> և Նորայր Բյուզանդացի<sup>30</sup>: Այս ամենից հետևում է, որ գիտական տեքստի վերամշակված նոր հրատարակությունն անհրաժեշտություն է<sup>31</sup>:

## ВЕНСКИЙ ПАЛИМПСЕСТ ИСТОРИИ АГАТАНГЕЛОСА

А. Ст. ТОПЧЯН

### Резюме

Рукопись № 56 библиотеки венских мхитаристов является палимпсестом, содержащим древнейший список (IX-X вв.) "Истории Армении" Агатангелоса. В XIII в. этот первоначальный текст был стерт, и пергамен был использован для написания другого сочинения. Текст Агатангелоса, почти не учтенный в критическом издании 1909 г., был восстановлен и опубликован в 1911 г. Данный список содержит ряд разночтений, которые совпадают с греческой версией "Истории" (вероятно, VI в.), что свидетельствует об их аутентичности. В статье приводятся несколько интересных примеров.

<sup>29</sup> Տե՛ս ծանոթ. 12:

<sup>30</sup> Նորայր Ն. Բիւզանդացի. Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ագաթանգեղոսի եւ Ղազարայ Փարպեցւոյ. — «Յուշարձան» (գրական ժողովածոյ առթիւ 100-ամեայ յոբելինի հաստատման Միլիթարեան Միաբանութեան ի Վիեննա, [1811–1911] եւ 25-ամեայ տարեշրջանի «Հանգէս Ամսօրեայ» ուսումնաթերթի [1887–1911]), Վիեննա, 1911, էջ 161–174:

<sup>31</sup> Այդ նոր հրատարակության համար անշուշտ կարևոր կլինեն նաև Ագաթանգեղոսի՝ պահպանված հնագույն պատառիկ-պահպանակների ընթերցումները (տե՛ս Մ ու լ - ր ա դ յ ա ն, 235–258):

## THE VIENNA PALIMPSEST OF AGATHANGELOS' "HISTORY"

ARAM TOPCHYAN

## S u m m a r y

Manuscript no. 56 of the Mechitarist library of Vienna is a palimpsest containing the oldest copy (the 9th-10th cc.) of Agathangelos' "History of Armenia". In the 13th century, this original writing was erased and a new work was written on the parchment. Agathangelos' text, almost not taken into consideration in the critical edition of 1909, was deciphered and published in 1911. It contains a number of *variae lectiones* coinciding with the Greek version of the "History" (probably, dating from the 6th c.), which witnesses to their authenticity. Several interesting examples are adduced in the present article.